ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«16» մայիսի 2018 թվականի № 47-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի ապրիլի 20-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ-38 և 2018 թվականի մարտի 26-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» N 409 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մարտի 12-ի թիվ Ֆ-72/18 գրությունը, «ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերության 2018 թվականի փետրվարի 12-ի դիմումը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 45,6 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/583 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրի՝ 1.X=4407431 Y=8544249, 2.X=4407611 Y=8544225, 3.X=4407626 Y=8544212, 4.X=4407654 Y=8544262, 5.X=4407623 Y=8544368, 6.X=4407523 Y=8544440, 7.X=4407432 Y=8544388 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 218,97 հազ.մ^3 հրաբխային ավազների մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-583 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4407431 Y=8544249, 2.X=4407604 Y=8544225, 3.X=4407631 Y=8544204, 4.X=4407658 Y=8544260, 5.X=4407624 Y=8544362, 6.X=4407605 Y=8544382, 7.X=4407523 Y=8544440, 8.X=4407465 Y=8544454, 9.X=4407425 Y=8544437, 10.X=4407432 Y=8544388,

11.X=4407426 Y=8544295 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 4.0 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 4500 մ^3 հրաբխային ավազների պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-583 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ 5 օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-583 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

/ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ